տեղ նորան հասաւ Օսմանի թուղթը, թէ՝ “Մուավիա ի. Աբու Սուֆիան ինձ կը գրէ՝ ‘Ես լուր առայ, որ յոյնք մեծ բազմութեամբ կ'արշաւեն մուսլիմների դէմ. ես կարծում եմ, որ նա նոցա օգնութեան կուղարկէ կուփայիներից, իսկ դու ուղարկիր թշնամու դէմ մի քաջ եւ սրտոտ մարդ 8 կամ 9.000 զօրքով այնտեղից, ուր քեզ կը հասնի իմ թուղթը: Ողջոյն:„ Վալիդ դարձաւ դէպի զօրքը, տեղեկացրեց նորան (այս) բանի մասին եւ ուղարկեց Սալման ի. Ռաբիա Բահլիին 8.000 զօրքով հանդերձ: Սալման արշաւեց եւ մտաւ Ասորիքի ժողովրդի հետ յունաց երկիրը, ուր նա՝ իւր զօրքը բաժանելով մի քանի գնդերի՝ ասպատակ սփռեց, աւերեց ինչ որ կամեցաւ եւ առաւ բազմաթիւ ամրոցներ:

Այլք կը պատմեն, որ Սայիդ ի. Աս ուղարկեց Հաբիբ ի. Մասլամային Սալման ի. Ռաբիայի հետ հանդերձ մուսլիմներին օգնութեան. պատճառն այն էր, որ Օսման գրեց Մուավիային՝ ուղարկել Հաբիբ ի. Մասլամային Ասորիքի ժողովրդի հետ Հայաստան. Մուավիա ուղարկեց, եւ Հաբիբ գնաց պաշարեց Կարին եւ այնպէս նեղեց քաղաքի բնակիչներին, որ նոքա խնդրեցին իրենց խնայել՝ գաղթելու կամ հարկ տալու պայմանով. նոցանից շատերը գաղթեցին եւ բնակեցան յունաց երկրում[1]. . . :

31. թ. ըստ ոմանց Հայաստան նուաճեց Հաբիբ ի. Մասլամայ:

42 թ. Հայաստանում մեռաւ Հաբիբ ի. Մասլամայ Ֆիհրի, որին Մուավիա դրել էր կառավարիչ երկրի վերայ:

73 թ. Աբդուլմալիք դրեց իւր եղբայր Մուհամեդին կառավարիչ Միջագետքի եւ Հայաս-

---

[1] Շարունակութիւնը բառացի քաղուած է Բելազորիից: